



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“23” 05 2018թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 142-Ա

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ
ՀԱՐՈՒՅԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԶՆՆՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 45-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 258-Ն որոշման 1-ին հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև նկատի ունենալով Iragir.am-ի՝ «Բաց նամակ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանին» վերտառությամբ 2018 թվականի մայիսի 21-ի հրապարակումը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի նկատմամբ հարուցել վարչական վարույթ և վարչական վարույթի շրջանակներում կատարել զննում՝ վարույթն իրականացնող անձանց հետևյալ կազմով՝

- 1) Արմեն Մարտիրոսյան- ՀՀ ՏԿԶ նախարարի օգնական
- 2) Տիգրան Նաղդալյան-ՀՀ ՏԿԶՆ աշխատակազմի իրավաբանական բաժնի փորձագետ
- 3) Վարդուհի Հովհաննիսյան- ՀՀ ՏԿԶՆ աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ
- 4) Աստղիկ Թումանյան- ՀՀ ՏԿԶՆ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ:

23.05.2018

X 

VERIFIED OCSP 23.05.2018 09:55:08 GMT+4

Подписано: PARIKYAN SUREN 3604860490

Ս. Պապիկյան